ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի, Իշխան Խաչատրյանի, Լևոն Դոխոյանի և Միեր Շահգելդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-632-09.10.2014-ԳԿ-010/0*) վերաբերյալ:

Համաձայն նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենները կարող են աշխատել մինչև 65 տարին լրանալը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական ոչ առևտրային կազմակերպությունների

բազայի վրա հիմնադրված կրթական հիմնադրամներում նման տարիքային սահմանափակում չկա, ինչն առաջացնում է անհավասար պայմաններ պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնադրամների գործադիր մարմինների ղեկավարների համար:

Հարկ ենք համարում նշել, որ կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում են տվյալ կազմակերպաիրավական ձևի համար նախատեսված համապատասխան օրենքի դրույթներով, մասնավորապես, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով: Կազմակերպաիրավական ձևով պայմանավորված՝ տարբերվում են կազմակերպությունների կառավարման մեխանիզմները՝ կառավարման խորհրդի ձևավորումը, գործունեությունը, իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի ընտրության կարգը և պայմանները, պայմանագրի կնքումը և այլն: Հետևաբար, անգամ նախագծի ընդունմամբ, հնարավոր չէ տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող կազմակերպությունների համար ստեղծել նման և հավասար պայմաններ:

Միաժամանակ, կարևորելով ոլորտի բարեփոխումներում կառավարման դերն ու նշանակությունը, ինչպես նաև բուհերի ֆինանսական ինքնավարության ու ինքնուրույնության ընդլայնման միտումը, վերանայվում է պետություն-բուհ փոխհարաբերությունների շրջանակը և պետական բուհերի՝ որպես պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակը: Պետական ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևի փոփոխման գործընթացի իրականացումը, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության և համապատասխան լիազորված մարմնի, միտված է կրթության որակի բարձրացմանը, ուսումնական հաստատություններին ավելի լայն հնարավորությունների ընձեռնմանը, ինքնավարության ընդլայնմանը և բուհերի կրթական ծառայությունների մատուցման բարելավմանը: Տվյալ դեպքում գործադիր մարմնի ղեկավարի

տարիքն ուսումնական հաստատության կրթության որակի առումով, ինչն առավել կարևոր է, որևէ նշանակություն ունենալ չի կարող:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը անանպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա լրացում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված այն պետական ուսումնական հաստատությունների կանոնադրություններում, որոնց կազմակերպաիրավական ձևը հիմնադրամ է:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների ղեկավարների պաշտոնում աշխատող անձանց տարիքային սահմանափակմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հստակեցվում են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների ղեկավարների պաշտոնում աշխատող անձանց տարիքային սահմանափակման հետ կապված հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի «վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

“Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի ղեկավարը, անկախ այդ հաստատության կազմակերպաիրավական տեսակից, չի կարող պաշտոնավարել 65 տարին լրանալուց հետո:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2.Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-632-09.10.2014-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել 5-րդ պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի ղեկավարը, անկախ այդ հաստատության կազմակերպաիրավական տեսակից, չի կարող պաշտոնավարել 65 տարին լրանալուց հետո»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի նախագիծը միտված է պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների ղեկավարների պաշտոնում աշխատող անձանց համար հավասար աշխատանքային պայմանների ստեղծելուն: Գործող օրենսդրությամբ պետական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում անձը կարող է աշխատել մինչեւ 65 տարին լրանալը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների «ՊՈԱԿ»-ների բազայի վրա հիմնադրված կրթական հիմնադրամներում նման տարիքային սահմանափակում չկա, ինչը ստեղծում է անհավասար պայմաններ ՊՈԱԿ-ների եւ հիմնադրամների գործադիր մարմինների ղեկավարների համար: